

Պրակտոսպիկը բոլոր յերկրների միոցեւ

Ա. ԴԱՆԵԼԲԵԿ

ԼԱՎ Ե ՈՒՅ,

ՔԱՆ ՑԵՐԲԵՔ

Ա. ԳՐԱ-ԶԵԽՈ ՄԵԽ ԳՈՐԾՈՂՈԽՈՎՈ. ՄԱ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԳՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ - 1926

891.99

7-16

22 JUN 2007

Հ Յ ՏԵ 2011

891.99  
Դ-16

Պարկետարներ բոլոր յերկրների հարցում 1.

## ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

ԼՈՒՅՍԸ ԵՐԿՐՈՎ

«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի

## ՀԵՏԵՎԵԱԼ ԳՐՔԵՐԸ

1. Օ. Շահումյան. — Մեր անեղիքները (սպասված)	20
2. Փրառման յակ Օ. Մելիքոնյան. — Ինչու ձեռնոտ յի զարձարանու յուղ և շվեյշ. պանիք պատրաստելը	3
3. Հ. Փրառման. — Խոտարույները և նրանց մշակության յիզանակները	10
4. Խ. Ավդարեղյան. — Հ. Խ. Խ. Հաղային Արենովիրքը, բացարբական հարց ու պատասխաններսպ, մասն տրաջին, աշխատավորական հոգուդաստություն (սպասված)	10
5. Պ. Հեթիմյան. — Թթենու մշակությունը	10
6. Պ. Հեթիմյան. — Շերտմի վորդը, նրա կերտերին ու լոնումքը	10
7. Ե. Մելիք-Շահնազարյան. — Ծխախօսի մշակությունը	20
8. Ս. Գրիգորյան. — Տառը պատզամ անասնապահին	20
9. Խ. Ցեղեցյան. — Անհատական, թե կոռզիբատիվ կաթնառանենություն	10
10. Հ. Հարուրյան. — Բառակ, կնքիք պայմանագիր (շափ.)	5
11. Մ. Թումանյան. — Շարքացանը և նրա նշանակությունը	15
12. Խ. Ցեղեցյան. — Ինչպես մշակել խոզպի արդիները. (28 նկարով)	35
13. «Թեհանես զեսի գյուղ». — Անգրկոմի ասյան յերկրային կոմիտեի բանաձեռ գյուղացիական հարցի մասին	
14. Շաղամարտիրոսյան	15

№ 20 (23) «ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ» № 20 (23)

Ա. ԴԱՆԵԼԲԵԳԼԱՎ Ե ՈՒՅ,  
ՔԱՆ ՅԵՐԲԵՔ

ԱԳՐԱ-ՊԻԵՍ ՄԵԿ ԳՈՐԾՈՎԱԿԱԹՅԱՐԻ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ

ՏԵՐԵՎԱՆ - 1926

28.03.2013

-26888

ԽՄԲԱ.ԳՐՈՒԹՅՈՒՆ.ՄՐ  
ՀԱՂԱՊԵԿՈՄՅԱՏԻ ԽՄԲ. ԿՈՎԵԴԻՆԱՅԻ

Շարված և «Լինոտիպով»

ՏԵՍԱԳՐԱԿԱՆ ՏՐԵՄԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ  
Գրքա. 338 է. Գալովեց 21/71 Տիբաժ. 2000

ՀԱՎԵ

ՈՒԾ,

ՔԱՆ

ՅԵՐԵՒԱՆ

ԱԳՐՈ-ՊԻԵՏ

ԱԵԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄՐ

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՆԻԿՈԼ.—Գյուղացի, 50 տար.

ԱՐՈՒՍՅԱԿ.—Նրա կինը, 45 տար.

ՌՈՒԲԵՆ.—Սրանց վորդին, 20 տար.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ.—Նիկոլի հարևանը, 40 տար.

ԱՇԽԱՏ.—Շրջանային գյուղատնտես, 30 տար.

ԱՆՆԱ.—Խրճիթ-ընթերցարանի վարիչ, 25 տ.

Գործողությունը կատարվում է գյուղում:

Գյուղական սենյակ Նիկոլի տանը: Մի անկյունում նստած ե Արուսյակը, վոր թել ե մանում ու մեղմ ձայնով յերգում: Մյուս անկյունում թախտի վրա նըստած ե նրա վորդի Ռուբենը և կարգում ե «ԳՅՈՒԴԱԾՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔ» ամսագիրը: Ժամանակ առ ժամանակ նա զարժանալով ասում է. «250 փութ ցորեն մի զեսյատին աշնանացնեց, սերմնափոխությունը բարձրացնում ե բերքի չափը, կերը և լավ խնամքը բարձրացնում են կաթի քանակը» և այլն:

ԱՐՈՒՍՅԱԿ.—Ի՞նչ ես կարգում, Ռուբեն, բարձր ձենով կարգա, վոր յես ել մի բան հասկանամ:

ՌՈՒԲԵՆ.—Ինչո՞ւ իզուր չարչարվեմ, ժիկնույն ե, ինչ վոր գրքերում գրում են, դու չես հավատում: Յես նկատել եմ, վոր յերբ քեզ համար մի բան կարգում եմ կամ լսածու ասում, դու միշտ բարկանում ես և ասում: «Յո գրքում բոլորը սուտ ա գրված, եղանական չի լինի»:

ԱՐՈՒՍՅԱԿ.—Հայրդ ո՞ւր գնաց, չե՞ս իշտանում:

ՌՈՒԲԵՆ.—Այսոր գյուղիսորհրդում ժողով է նշանակված: Շատ հետաքրքիր հարցի

մասին պիտի խոսեն: Մեր մի քանի գյուղացիք ուզում են տրակտոր գնեն վարկային ընկերությունից, դրա համար հարկավոր ե ընկերություն կաղմակերպել: Լավ կը լիներ, յեթե հայրս ել անդամ գրվեր. այն ժամանակ մենք յերեք լուծ յեզ չեյինք պահիլու կերակրիլ, համ ել մեր հողերն իր ժամանակին կը մշակեյինք և լավ կը մշակեյինք, թե չե՞նչ ոգուտ պիտի տա չութի վարը: Ճի՛շտ ե ասում մեր գյուղատնտեսը, վոր չութի վարը վոչ թե վար ե, այլ հողամասը, ժամանակը և աշխատանքը փչացնել ե:

**ԱՐՈՒԵՍՏԱԿ.**—Դու ել քո գյուղատնտեսի պոչից բռնած՝ ինչ վոր ասում ա՝ հավատում ես. նա ի՞նչ ոգուտ ե տալիս մեզ:

**ՌՈՒԲԵՆ.**—Ո՞վ ե մեղավոր, վոր նրանից ոգուտ չենք ստանում. յեթե նրա ասածները լոեյինք, ես որում չեյինք լինի:

**ԱՐՈՒԵՍՏԱԿ.**—Ասում ես ելի, հա՛-հա՛-հա՛ (ծիծաղում ե). քո գյուղատնտեսի գլխումն ի՞նչ խելք կա վոր: Միտղ ա՞, վոր անցած կիրակի որն ամբողջ գյուղը նրա վրա ծիծաղում եր: Յեկել եր գյուղը—բոլոր մարդկանց իրեն գլխին հավաքել ու ի՞նչ եր ասում. «Յեկելք ցուցակագրվենք, թե ում ինչքա՞ն խոտի սերմ ե հարկավոր, վոր վարկային ընկերության միջոցով բերել տանք և իր ժամանա-

կին—գարնանն ստանանք ու ցանենք»: Բա դա իմելոք մարդի խոսք ա՞: Յաշումս չեմ տեսել, վոր խոտը ցանեն: Փառք աստծու, ինքն իրան բուսնում ա, ել ինչո՞ւ ավելորդ զահմաթքաշենք:

**ՌՈՒԵՆ.**—Բավական ե, դու հույսդ գիր աստծու վրա, թող խոտը բուսնի և կովերդ կաթ տան: Եղակես եք արել ե՛, վոր մեր գյուղն ու մեր ապրուստը բանի նման չեն:

## ՏԵՍԻԼ 2

(Մտնում են Նիկոլը և Հարությունը):

**ՆԻԿՈԼ** (Բարձր ձայնով).—Զարմանալի բան ե, ասես թե ես աշխարհում ել ուրիշ դորձ չունենք:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ.**—Բարի իրիկուն, թուբեն, տեսնում եմ՝ ելի մորդ հետ վիճում ես:

**ՌՈՒԵՆ.**—Բիծա, մի տարուց ավել ե, վոր յես գյուղատնտեսական խմբակում աշխատում եմ: Գյուղատնտեսը մեզ շատ բաներ ե պատմել, այնպիսի բաներ, վոր յես կյանքումս չեմ լսել: Մի որ մեր Ռհանենց Սարդիսը վերջապես ասեց. «Ինչ վոր գյուղատնտեսն ասում է, յես իմ տնտեսության մեջ անելու յեմ, տեսնենք՝ թե ի՞նչ կը դառնա»: Իր խոստումը կատարեց, և ի՞նչ ես կարծում, ի՞նչ հետեւանքներ ունեցավ:

**ՆԻԿՈՂ.**—Այս ջանրմ՝ չգիտեմ՝ ևս տղի հետ ի՞նչ անեմ։ Վորտեղ նստում ա, իրա գյուղատնտեսի մասին ախոսում։ Այնք չգիտե՞նք, թե քո Ուշանենց Սարդիսն ո՛վ ա, ինչ ուանչպար ա՛։ Ախր մի ինձ հարցրու, թե քո գոված գյուղատնտեսի գործն ի՞նչ ա։ Ամսական հարյուր մանեթն ստանում ա եւ, իրան համար քեֆ անելով ապրում։ Հենց վոր գլուխը մի բան ամտնում՝ «Յեկեք, ժողովուրդ, հալաքվեցեք, ձեզ հետ ուղում եմ խոսել»։ Նրա խոսքը քանի՞ գոռչ արժի։ Եսորվա ասած խոսքերը վոր դու յել լսեցիր, կը ծիծաղեցիր։ Աղջի Արուսյակ, դու ել լսիր, սրա գոված գյուղատնտեսն եսոր գյուղխորհրդում վեր կացավ, գլխարկը հանեց և սկսեց։ «Յեկեք կազմակերպենք մի տրակտորի ընկերություն։ Տրակտորը կառավարությունը բաց ե թողնում վարկով, յերեք տարվա ժամանակով։ Սկզբից պետք ե տալ չնչին գումար, արժեքի 10—15 տոկոսը՝ այսինքն մոտ 400 ռուբլի։ Յեթե 15—20 հոգի միանաք, ամենքիդ վրա կընկնի 20—25 ռուբլի։ մի տրակտորն որական վարում ե մոտ 3 դեսյատին, իսկ մի դեսյատին տրակտորի վարք նստում ե 10—15 ռուբլի»։ Մեկը չկար՝ ասեր եղ խելոքին, բա վոր մինչեւ հիմա մենք չենք իմացել տիպկտորն ինչ ա՛, յանի սոված մեռե՞լ ե՞նք, թե մեռ

հողերն իր ժամանակին չենք վարելու ցանել։ Փառք աստծու, մինչեւ հիմա առանց եղ տրակտորի ապրել ենք, եղածես ել կապրենք։ Հ'ը, Հարություն, ի՞նչ կասես ես խոսքին։

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՆ.**—Դե ի՞նչ անեմ, ետա դու ասեցիր ելի՛։

(Արուսյակը դուրս ե գնում)։

**ՌՈՒԲԵՆ.**—Հայրիկ, դու ամեն որ միենույն բանն ես ասում։ «Հողս մշակել եմ, քո գյուղատնտեսն անխելք ա»։ Լավ, թող այդպես լինի, բայց մի անգամ դու քեզ հարց տվե՞լ ես, թե ի՞նչպես ես մշակում հողերդ, վորքա՞ն ես սերմում և ի՞նչ ես վերցնում։ Կովդ վորքա՞ն կեր ե ուտում և վորքա՞ն կաթ ե տալիս։ Արտդ վոր մարդ մտնի՝ կը զարմանա—չի կարելի ջոկել, թե ի՞նչ ե ցանված։ Մոլախոտի մեջ յես ու դու կը թաղվենք։

**ՆԻԿՈՂ.**—Դե գնա թաղվի քո գյուղատընտեսի հետ, վոր իմ աչքը ձեզ չտեսնի։ Ես գըլխիցը 25 մանեթ տուր, թե տրակտոր եմ առնում։ Հետո՞ ինչ պիտի տամ, աստված գիտի։ Իսկ ինքը ձեռքերը յետեին դրած պետք ա մեզ վրա ծիծաղի ու ասի. ա՛յ, հիմարներ գտահա՛։ Անպատճառ եղ գործում չահ ունի։ Ի՞նչ ես ասում, Հարություն, ի՞նչու յես լոել, ինչո՞ւ չես խոսում։

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՆ.**—Դե ի՞նչ խոսեմ, ջանրմ,

դու ետա պուլիմյոտի նման վրա յես տաղի:  
բալքի շահ ունի, վոր քրտինքը թափելով ու-  
զում ա մեզ համոզի. մենակ ոռճիկով եղքան  
չեն խոսի:

**ՌՈՒԲԵՆ.**—Նա մեր ոգտի համար ե քրտինք  
թափում: Զե՞ք տեսնում, ինչպե՞ս ե ապրում:

**ՆԻԿՈԼ.**—Ախպեր, նրա խերը մեզ հարկա-  
վոր չի. թող մեզ հանգիստ թողնի և զուր տեղը  
քրտինք չժամփի:

**ՀԱՅՈՒԹՅՈՒՆ.**—Անցած տարի յեր, ե-  
կավ ու ասաց.—«Ապահովագրեցեք ձեր անա-  
սունները, յեթե մի գլուխ սատկի, կառավա-  
րությունը ձեզ վարձատրելու յե»: Յես ել հիմա-  
րի պես նրան լսեցի: Ի՞նչ դառավ: Երկու կովս  
սատկեց ու վոչ նրա կոպեկը տեսա, վոչ ել նրա  
յերեսը:

**ՆԻԿՈԼ.**—Այ ջանըմ, բա եսքան ժամանակ  
ինչի՞ համար եմ երվում: Խոստում հա խոս-  
տում, իսկ գործ, ոգնություն՝ չկա', չկա',  
չկա':

**ՌՈՒԲԵՆ.**—Լավ, բիձա, ո՞վ եր մեղավոր,  
վոր կովերդ սատկեցին ու փողը չստացար:  
Գյուղատնտեսը քեզ ասաց, վոր չումա կա, անա  
սունները պատվաստել տվեք: Դու չլսեցիր:  
Հետո, նա քեզ ասեց, վոր քո յերկու կովը թաք-  
ցրու և մի ապահովագրի՞ր: Դու ուզում եյիր  
կառավարությանը խարել, չեղավ: Հիմա ասա

տեսնեմ, այս բոլորի մեջ գյուղատնտե՞սն ե մե-  
զավոր, թե՞ դու:

### ՏԵՍԻԼ 3

(Մտնում ե Արույշակը, բերում ե 4 բաժակ  
քեյ, նրա յետեվից մտնում ե գյուղատնտես  
Աշոտը):

**ԱՐՈՒՅՇՅԱԿ.**—Համեցեք, ընկեր գյուղա-  
տնտես:

**ԱՇՈՏ.**—Բարի յերեկո: Բարե, ընկեր  
Ռուբեն: Կարդացե՞լ ես իմ տված գրքերը: Յե-  
կող շաբթին մեր գյուղատնտեսական խմբա-  
կում քո զեկուցումն ե՝ շարքացան մեքենայի  
առավելությունների մասին. լավ պատրաստ-  
վեր:

**ՆԻԿՈԼ.**—(Արանձին) Ահա, իրար գտան:  
Յերկուսի գլխումն ել մի կոպեկի խելք չկա-  
(ապա դատնում ե դեպի նրանց)՝ Նստեցե՞ք,  
մի-մի ստաքան չայ խմենք:

**ՌՈՒԲԵՆ.**—Իսկապէս, ընկեր գյուղատն-  
տես, վորքա՞ն ոգտավիտ ե շարքացան մեքե-  
նան:

**ՆԻԿՈԼ.**—Շարքացանն ի՞նչ ա, ընկեր Աշո-  
տը նոր մեքենա ա դուրս քցել մեր գյուղին խա-  
թաքալա. բա յե՞րը ես հավաքում մեր հասա-  
րակությանը, վոր ընկերություն ստեղծե՞նք:  
Բան չունես ելի՛, գիշերը հնարում ես, յերեկը  
կատարում:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ.** — Քեզ պես գյուղատնտես ունեցողք պետք ա մի մեքենա յել ունենա փող կտրելու. դու հնարես, մենք առնենք, տեսնենք վերջն ի՞նչ դուքս կը գա:

**ՆԻԿՈԼ.** — Աղջի Արուայակ, գյուղատնտեսի համար մի ստաքան չայ բեր, մի քիչ ել ուսելու քան:

(Արուայակը գնում, թերում ե մի բաժակ քեյ, հաց, կարագ և մեղք):

**ԱՇՈՏ.** — Նիկոլ ախպեր, այս տարի ձեր մեղքի բերքն ի՞նչպես եր, լա՞վ եր:

**ՆԻԿՈԼ.** — Ինչո՞ւ չե, փառք աստուծո, լավ եք: Քեզ պես մեկն եկավ ասեց, վոր մեղուների մեջ փտախտ կա, պետք ա կովենք ու մկսեց մի փեթակից մյուս փեթակը տեղափոխել: Ենքան տեղափոխեց, վոր վոչ մեղու մնաց, վոչ մեղք:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ.** — Յես ել մի տասը փեթակ ունեմ, ելի վոչ մի բերք չկա, չդիտեմ՝ չորոշյունից կը լինի: Յես եղ մարդուն վոչ ցույց տվի և վոչ ել թողեցի մոտենա:

**ՌՈՒԲԵՆ.** — Յեթե ձեղանից լիներ կախված, յերկի բոլոր գյուղատնտեսներին կը մորթեցիք, նրանք են, վոր ձեզ «վնաս են տալիս»:

**ՆԻԿՈԼ.** — Այ ջանըմ, ես յաջս քաշել եմ, վոչ փտախտի անունն եմ լուել, վոչ շարքացան մեքենայի անունը: Հմի շվար եմ մնացել, ի՞նչ անեմ, վո՞ր հողը տամ դլիմիս:

**ԱՇՈՏ.** — (Ծիծաղելով) Դուք շատ բան չը գիտեք, բայց դա չի նշանակում, վոր չպետք ե մեր գյուղացու տնտեսության մեջ նոր ձևեր մտցնենք: Մենք չդիտենք, թե ի՞նչ ե ելեք արրական լուսավորությունը, բայց հիմա նա վո՞չ միայն ծառայում ե քաղաքներում, հարուստների տները լուսավորելուն, այլ երանեցնում ե գործարաններ, յերկաթուղիներ: Շատ տեղերում եկեքտրականություն: Վոչ միայն գյուղացիների խրճիթն ե լուսավորում, այլև նրա ուժով գյուղացին ցանում ե, կայ և անում ե այլն: Մենք չդիտենք, թե ի՞նչ ե ողանավը, բայց հիմա նա վոչ թե ոգտագործվում է պատերազմի, մարդ կոտորելու, այլ ծառայում ե թե՛ մարդիկ ու բեռներ փոխադրելու համար և թե՛ մեծ ոգուտ ե տալիս: Ողանավերի միջուցով շատ հաջող կերպով կովում են մորեխի և ուրիշ վնասատուների գեմ: Այս ամենի մասին մենք յերազել ել չեցինք կարող: Կանցնեն մի քանի տարիներ և ձեր արորն ու չութը, 5-6 զույգ լծկան պահանջնող հին ձեմի գութանը միայն թանգարաններում կը լինեն: Մեր մատայ մերունդն արդեն համոզվել ե, վոր նրանց միշտ ջոցով անկարելի յե տնտեսություն բարձրացնել և գյուղացու համար բարեկեցիկ կյանք ստեղծել:

**ՆԻԿՈԼ.** — Եղ բոլորի շատ լավ, բայց յետ

ուղում եմ իմանամ՝ ձեր ասելով եղ վոսկի ժամանակում ամեն մի գյուղում զանազան տեսակի քանի ընկերություն ա լինելու, (Առանձին) ոռձիկ ստացողները շատանալու յեն:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ.**—Եղ վոչի՞նչ, ի՞նչ պետք ա աժենա են ժամանակ հացի գրվանքան: Անպատճառ վոսկուց ել թանդ կը մինի:

**ՌՈՒԲԵՆ.**—Զեր հարցերն ինձ միանդամայն գժվեցնում են: Ինչ նորություն վոր ձեզ հայտնում են, դուք միշտ աշխատում եք ծիծառի քցել:

**ԱՇՈԾ.**—Այդպես ե յեղել միշտ, բայց պիտի աշխատենք, վոր այդպես չլինի: Հին մարդիկ առաջին անգամ ժամացույց ու թռչելու մեքենա հնարողներին կախել են, իսկ հիմա մրցանակ են տալիս նրան, ով ավելի լավ սիստեմի մեքենա յե հնարում: Յերբ առաջին անգամ գյուղատնտեսը դաշտը պարարտացըել է, գյուղացիները ծեծել են նրան՝ ասելով, թե նա մեր հացահատիկները թունավորում ե. իսկ հիմա ամեն մեկը գիտե, թե ի՞նչ մեծ նշանակություն ունի պարարտացումը բերքն ավելացնելու համար: Առաջ մորեխին սպանելը մեղք եր համարվում, իսկ մեր աչքարաց զանգեղուցին 1922 թ. հրաշալի կերպով կոսորեց նրան և փրկեց իրա դաշտերը:

Առաջ սեր ստանալու համար կաթը փոռում եյին տաշտերի մեջ, իսկ հիմա սերզատ մեքե-

նան ե փառավոր գործ կատարում:

**Ա.յա** հառաջաղիմությունը գյուղ ե մտել կրթության և գյուղատնտեսների չնորհիվ: Հարկավոր ե շատ կարդալ, լավ հետեւել գյուղատնտեսների ասածներին և կատարել նրանց պատվերները: Գյուղատնտեսը միշտ յեղել ե և կը մնա գյուղացիության ընկերն ու բարեկամը: Մենք կանչված ենք ձեզ ծառայելու և ձեր տնտեսությունը բարձրացնելու, վոր դուք դուրս գաք ձեր ներկա ծանր գրությունից:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ.**—Հետաքրքիր ե իմանալ՝ վո՞նց եք ցանկանում մեզ ծառայել և մեր տընտեսությունը բարձրացնել:

(Դուռը ծեծում են):

#### ՏԵՍԻԼ 4

**ԱՐՈՒՍՅՑԱԿ.**—Ո՞վ ա եղտեղ, մտե՛ք:  
(Մտնում ե ընկ. Աննան):

(Բոլորը միասին).—Ո՛, ընկեր Աննա, համեցեք:

**ՆԻԿՈԼ.**—Բարով ես եկել, Աննա ջան: Աղջի Արուսյակ, Աննի համար մի ստաքան չայ բեր: Աննա ջան, նստի՛ր: Ասա՝ ի՞նչ կա, ի՞նչ չկա. ի՞նչ նոր խարար:

(Արուսյակը թեյ ե բերում, Աննան վերցընում և սկսում ե խմել):

**ԱՆՆԱ.**—Առավոտվանից մի կտոր հաց չեմ դրել բերանս: Այնքան մարդ ե յեկել մեր խըր-

Ճիթ-ընթերցարանը, վոր ասել դժվար է. տան-  
մոռով անցնելիս տեսա ձեզ մոտ հյուրեր, մտա-  
տեսնեմ, ի՞նչ եք անում:

**ԱՐՈՒԻՍՅԱԿ.**—Շատ լավ ես արել:

ՆԻԿՈՂ. —Շատ ուրախ ենք, վոր յեկել ես.  
մեր գուռը ձեզ համար միշտ բաց ա:


**ԱՇԽԾ.**—(Ծիծաղելով) իսկ ինձ համար  
միշտ փակ:

ՆԻԿՈՂ. —Ասոված վոչ անի: Դու ել ես լավ  
տղա, շատ ուրախ եմ, վոր գալիս ես, բայց  
ենա վոր մեզ խաբում ես: Հա՛յ մի գեսյատինը  
200 փութ ցորեն ա տալիս, մի խոտ կա, վոր  
գեսյատինից 300 փութ չոր խոտ են վերցնո՞ւմ,  
համ ել երկու անգամ մի տարումը հնձո՞ւմ:  
Թուսաստանի կովերը 250 վեդրո կաթ են տա-  
լի՞ս: Այդ բոլորից իմ խելքը բան չի կտրում:  
Վա՛յ ինձ, վա՛յ իմ հոգուն, կարծում եմ, վոր  
այդ բոլորը սուս ա:

ԱՆՆԱ. —Ի՞նչու յեք այդպես ասում, բնկեր  
Նիկոլ: Յեկեք մեր խրճիթ-ընթերցարանը, յես  
ձեզ կըտամ հենց«ԳՅՈՒՂԱՅՈՒԻ ԳՐԱԴԱՐԱՆ»—ի  
գրքեր և դուք ձեր աչքով կը կարդաք և կը  
հավատաք:

ՌՈՒԲԵՆ. —Իմ հայրը վոչ աշքին է հավա-  
տում, վոչ ել ականջին:

ՆԻԿՈՂ. —Իմ բոլոր հույսն ու հավատը քեզ  
վրա յեմ դրել, դա ք՞իչ է:



**ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆ.**—Հսկե՛ր Աշոտ, դու խոս-  
տացար ասես, թե ինչպի՞ս ես ցանկանում մեր  
անտեսությունը բարձրացնել: Յեթե դա սեկ-  
րետ չի, խնդրում եմ՝ ասես:

ԱՆՆԱ. —Մեր կառավարությունն ստեղծել  
ե միջոցներ, վոր այդ բոլոր սեկրետները զյու-  
ղացիությունն իմանա, յեթե որինակ՝ դուք  
հաճախեք գյուղատնտեսական խմբակների պա-  
րապմունքներին, մտնեք մեր խրճիթ-ընթերցա-  
րանը, վորը ձեզ համար ե կազմակերպված,  
վերցնեք զրքեր և թերթեր ու ազատ ժա-  
մանակը կարդաք, դուք կը համոզվեք ընկեր  
Աշոտի ասածներին և ձեզ համար վոչ մի սեկրետ  
չի լինի:

**ՌՈՒԲԵՆ.**—Հայրիկ, որինակ վերցրու  
հենց ինձ:

**ԱՐՈՒԻՍՅԱԿ.**—Եղ եք պակաս, հերը տղից  
որինակ վերցնի:

ՆԻԿՈՂ. —Դե ամբողջ աշխարհը քեզ պես  
խելոք չի լինի հո՛:

**ԱՇԽԾ.**—Այստեղ վոչ մի սեկրետ չկա:  
Մինչև անգամ, յեթե դա սեկրետ լինի, յես  
պարտավոր եմ ձեզ բաց անել:

ՆԻԿՈՂ. —Դե ասա՝ տեսնենք, ի՞նչ ես ու-  
ղում ասել:

**ԱՇԽԾ.**—(Խմելով քեյի վերջին կումը,  
դնում ե բաժակը սեղանի վրա, վեր ե կենում

տեղից և ասում)։ Մեր Խորհրդային կառավարությունը հայտարարել է «Յերեսներս գեղի գյուղ» լոգունդը։ Դա չի նշանակում, վոր պիտի բարձրանանք մի մեծ սարի գլուխ և այնտեղից նայենք գյուղին։ Դա նշանակում է, վոր պիտի մտնենք գյուղը, ուսումնասիրենք գյուղի կյանքն ու կարիքը, աջակցենք և կոռպերացման յենթարկենք գյուղացիների տնտեսությունները։ Դա յեր մեր նպատակներից մեկը և այն պիտի կիրառենք կյանքում։

Մենք պիտի շասենք, թե Հայաստանում քիչ բերք ենք ստանում այն պատճառով, վոր հողը քիչ է կամ անպետք է։ Յեթե ձիշտն ասենք՝ մեղքը մերն եւ և անպետքը մենք ենք։ Պիտի հողը մշակել լավ, մտցնել նոր ձեւեր, և հողը մեզ լավ արդյունք կը տա։

**ԱՄՐՈՒԹՅՈՒՆ.**—(Առանձին) Ես մեկը գլուխս մտավ։

**ԱՇԽԱՏ.**—(Շարունակելով) Խոսենք որինակներով։ Դուք սերմում եք ձեռքով և հողն եք քցում գեսյատինին վոչ պակաս 12-14 փութ սերմ։ Բայց կա շարքացան մեքենա, յեթե նրանով սերմեք, հարկավոր կը լինի վոչ ավելի 8-9 փութ գեսյատինին։ Ուրեմն առանց շարքացանի գուք ամեն մի գեսյատինի վրա անտեղի ցանում և կորցնում եք 4-5 փութ։ Հայաստանում ամեն տարի ցանվում է մոտ 200,000 գեսյատին

հող, ուրեմն ամեն տարի մեր գյուղացիությունը կորցնում է մոտ մի միլիոն փութ հացահատիկ։

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ.**—(Առանձին) Դե տա՞մենք մեր ձեռքով մեր տունը քանդում ենք ե՛լի։

**ԱՇԽԱՏ.**—(Շարունակելով) Հետո, դուք գիտե՞ք, թե ի՞նչպիսի սերմ եք ցանում։ Յեթե վերցնենք ձեր սերմից հարյուր հատ և փորձենք իմանալ, թե այդ սերմից քանի՞ոն է ծլում, ի՞նչ եք կարծում, ի՞նչ հետևանք կըստանանք. յես այդպիսի փորձ արել եմ—100 հատ սերմից 37 հատը բոլորովին չի ծլում։ Ել չեմ ասում, վոր հացահատիկի հետ խառը ցանում եք ամեն տեսակի վնասակար սերմեր։

**ՆԻԿՈԼ.**—Եղ շարքացան մեքենան յանի համ սերմում ա, համ ել վատերը ջոկո՞ւմ։

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ.**—Եյ մարդ, մի խանգարի, թող տեսնենք՝ ինչ է ասում ելի՛։

**ԱՆՆԱ.**—Ընկերնե՛ր, թույլ տվեք ընկեր Աշտար վերջացնի, իսկ հետո ինչ վոր մեզ համար պարզ չի լինի, հարցեր կը տանք և կը պարզենք։

**ՆԻԿՈԼ.**—Ներողություն, ընկ. Աշոտ, շարունակեցեք։

**ԱՇԽԱՏ.**—Շարքացան մեքենան չի կտում սերմը, այլ նա հավասար կերպով սերմը շարում է հողում, վորոշ խորության վրա։ Կա մի

ուրիշ մեքենա, վորի միջոցով կարելի յէ զտել հերձը:

Այս բոլորից յերեսում է, վոր դուք վատ սերմեր եք քցում արտի մեջ և ուզում եք, վոր նա ձեղ բերք տու: Այդպիսի գեղքերի համար առածն ասում է՝ «ինչ վոր ցանես, ե՞ն կը հընձես»:

**ՆԻԿՈԼ.**—Եղ մեկը ճիշտ ասացիր, ընկեր գյուղատնտես, համա դե ո՞վ ա մինչև հիմա մեր աչքը բաց արել և մեղ ճամբար ցույց տրվել...

**ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆ.**—Սերմի բանը մի քիչ հասկացանք, համա տավար պահելն ա շատ դժվարացել: Կերը պակասել ա, առանց տավարի յել մեր գյուղում տուն պահել չի լինի:

**ԱՇՈՏ.**—Յեթե մենք իրար հասկանանք և գյուղատնտեսական գիտության պահանջած ծրագրով գործենք, անսանապահության և կերի հարցն ել աստիճանաբար ու հեշտությամբ կը լուծենք:

**ՌՈՒԲԵՆ.**—Ուրիշ ժողովուրդներ վաղուց լուծել են այդ հարցերը, մենք ենք յետ մնացել:

**ՆԻԿՈԼ.**—Ելի սկսեցիր քո գրքերի ճառերը, մի թողեք տեսնենք՝ ես մարդն ի՞նչ ա ասում ե՞:

**ԱՇՈՏ.**—Ամենից առաջ կարելի յէ թվով բիչ: Բայց բայց անսաստներ պահել: Որինակ՝

ավելի լավ և լավ կաթնատու մի՛ կով ունենալ, քան 3-4 հատ անպետքը: Այս գեղքում և՛ լավ ոգուտ կըստանաս, և՛ կերի խնայողություն կանես:

**ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆ.**—Եղ քո ասած լավ կովերը մեր տավարի նման կես կուշտ, կես սոված կամ չոր գարմանով չեն կարա ապրի, թե վոր ապրեն ել, ուզածդ կաթը չեն տա:

**ԱՇՈՏ.**—Իմ ասած կովերը տարեկան 150-200 փութ կաթ կըտան, վորի արդյունքով իրանք ել կը կերակրվեն, դուք ել լավ կապրեք: Ի հարկե, այդպիսի կովերին չի կարելի չոր գարմանով կերակրել և կամ կիսաքաղց պահել: Բայց այդ գրությունից ել դուրս գալու շատ լավ, շատ ոգտակար և փորձված միջոց կա:

**ՆԻԿՈԼ.**—Վո՞րն ա եղ միջոցը:

**ԱՇՈՏ.**—Միջոցը կորնգան, առվույտ, սուղանի և ուրիշ տեսակի խոտեր ցանելն ե, վոր մի դեսյատինից տալիս են 3-4 հարյուր փութ չոր խոտ: Դուք լավ գիտեք, վոր բազուկը մեր լեռնային հողերում տալիս ե 1,000-1,500 և ավելի փութ մի դեսյատինից: Ստեփանավանի գավառում 1925 թվին մի գեսյատինից գյուղատնտեսն ստացել ե մոտ 3,000 փ. բազուկ: Բազուկը շատ լավ կեր ե կաթնատու կովերի համար: Մի բան ել պետք ե իմանաք, վոր

խոտաբույսեր և արմտիքներ ցանելուց հետո հողը հանգստանում է և հացահատիկի շատ լավ բերք տալիս:

ՆԻԿՈԼ.—Լավ, ասածներդ հասկացա, բա եղ բոլորը մենք կարանք անե՞նք:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ.—Զե՞ վոր եղ ձեր ասած բաներն անելու համար փող ել ա հարկավոր:

ԱՇՈՏ.—Զեր տրամադրության տակ կան վարձու և բեղմնավորման կայաններ: Բացի դրանից, յեթէ կազմակերպեք ընկերություններ, կամ գրվեք վարկային ընկերության անդամ, կառավարությունը պետք յեղած ժամանակ ձեռնտու պայմաններով ձեզ վարկ բաց կը թողնի: Ուրեմն հարկավոր և հառաջադիմություն ու ձեր տնտեսության մեջ նոր ձեեր ժողներու ցանկություն, և դուք այդ կարող եք անել:

Ո.ՈՒԲԵՆ.—Գյուղատնտեսական գիտելիքներ ձեռք բերելու համար կազմակերպվում են խմբակներ, ցուցադրական դաշտեր, վորտեղ կարելի յե լսել, տեսնել և սովորել:

ՆԻԿՈԼ.—Գիտես ի՞նչ կա, սիրելի! Աշոտ, տեսնում եմ, վոր դու ճիշտ վոր մեր ոգտի համար ես մտածում. յես իմ տնտեսությունը իմ բոլոր ունեցած չունեցածով դնում եմ քո տրամադրության տակ, յես ել լինելու յեմ քո աշակերտը, ինչ վոր ասես՝ լսելու յեմ, խերն ել լի-

նի իմը, շառն ել: Մի տարին մեղ չի սպանի: Տեսնենք ի՞նչ կը դառնա:

ԱՇՈՏ.—Կնիկ, ի՞նչ ես կարծում, լա՞վ կը լինի: ԱՐՈՒԹՅՈՒՆ.—ԱՇՈՏ, մարդ, արա՛, գուցե՛ մի լավ որի հասնենք:

ԱՆՆԱ.—Միենույն ժամանակը հաճախիր բնթերցարան, գիրքն ու գյուղատնտեսը միշտ պետք է քո բարեկամները լինեն:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ.—Նիկոլ ջան, ես տարի դու փորձիր, վոր լավ հետեւանք տա, եկող տարի յել յես եմ անելու:

ԱՇՈՏ.—Լավ ե ուշ, քան յերբեք:

(Վարագույր)



14. Հայուսունի ռոմու ճիշտական կուսակցության հենցը-  
նական նորմերի շաշուր Պիեռումի Բանաձեզեր 15 կ
15. Ա. Արմենյան, — Խոշոր յեղջուրավոր անտառների  
ժանախտը 15
16. 2. Ազգայան, — Գյուղատնտեսական բանվորությունը  
և միջազգային կոմունիստական շարժումը 40
17. 6. Խան-Ազգան, — Աւզեցոյց արդյունավետ խոզա-  
րության 15
18. Յերդինանգով, — Հայաբուծությունը և նրա ոգտաները 20
19. Ա. Դանելիքիզ, — Լավ և ուշ, քան յիրիք (ազգա-պիյա) 20

### ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Խ. Յերդյան, — Կոմինատնեսության գործնական  
ձևանարկ, մասն առաջին, (64 նկարով)
2. 2. Փիրումյան, — Գեմի հողերի մշակությունը
3. 3. Հայուսունի կորառոֆիլի մշակությունը
4. 4. Մելիք, Շահներպարյան, — Կապատը և կանեփը

### ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՀԵՏԶԵՏԵ ԿՀԱՆՉՆՎԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

1. Գենողերչակ
2. Հոգի ոգտագործման ընկերական ձեռը
3. Մելգուների խնամքը
4. Հոգի պարարտացումը
5. Ինչպես են ցանում բաժեքակը շարքացանով

**ԳԻՄԵԼ՝ ՅԵՐԵՎԱՆ,** Հողմուղկոման՝ Հրատարակչության, Պի-  
եռատի կենտրոնական և դավանական գր-  
իտնութիւններին, Գոմինողբաժիններին:

ՀՀ Ազգային գրադարան



NL0338331

26889

---

ԳԻՆԸ 20 ԿՐՊ.

---